Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 82-Ա որոշման

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրերում բնակվող սոցիալապես անապահով կանանց և երիտասարդների կենսամակարդակի բարելավմանը՝ մասնագիտական ուսումնացուցադրական կենտրոնի ստեղծման և բնական հողագործության, էներգաարդյունավետության ու գյուղական զբոսաշրջության թեմաներով անվճար ուսուցման/խորհրդատվության տրամադրման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանություն (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաբայան 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, քաղաք Սևան, Նաիրյան փողոց, շենք 164, ՀՎՀՀ՝ 08611805)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	34,044,515 դրամ, որից՝

		- Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն՝ 21,605,508 դրամ, որի մասով ակնկալվում են Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ, - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարան՝ 12,439,007 դրամ: Վերջինիս մասով Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ չեն ակնկալվում:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ստեղծվում է համայնքային նորարարական ուսումնացուցադրական կենտրոն՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղի դպրոցի հարևանությամբ: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը 10 տարի ժամկետով վարձակալությամբ է տրվել Ծովագյուղի դպրոցի նախկին կաթսայատան շինությունը՝ 60 քառ. մ մակերեսով և հարակից հողամասը՝ 0,1224 հա տարածքով (26.07.2022 թ. հ. 11231 վարձակալության պայմանագիր): 1. Ծովագյուղի նորարարական ուսումնացուցադրական կենտրոնի շենքի կցակառույցի շինարարության, շենքի կապիտալ վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 33,044,515 դրամ, որից՝ Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն՝ 20,605,508 դրամ և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարան՝ 12,439,007 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

		2. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Կենտրոնի շենքի կցակառույցի շինարարության, շենքի ջերմամեկուսացման, ներքին և արտաքին հարդարման, էլեկտրաֆիկացման, ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, օդափոխության ռեկուպերացիոն համակարգի տեղադրման ու կահավորման աշխատանքների իրականացում՝ 33,044,515 դրամ, որից 20,605,508 դրամ վճարվելու է Ճապոնիայի դեսպանատան դրամաշնորհային միջոցներով, որի մասով ակնկալվում են Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ, իսկ 12,439,007 դրամ վճարվելու է Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի միջոցներով, վերջինիս համար չի ակնկալվում Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնության տրամադրում: 2. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ, որը վճարվելու է Ճապոնիայի դեսպանատան դրամաշնորհային միջոցներով, որի մասով ակնկալվում են Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարան, Միասնական սոցիալական ծառայություն

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատան կողմից վերահսկողության իրականացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ